ըստա, ես կերթամ. թէ ես ծովի մէջ խեղուայ, տիւ էս տեղ սաղ կը մնաս։

Բաղտասար կասի.—Ա՛խպէր, տի՛ւ կայնի էս տե, ես կէրթամ։

29. Խալիվոր կասի.—Տի՛ւ կաց ըստայ, Սանասար թոխ կեայ խբտ ձի. նա վոժով ա, Գուրգն ու Գօրօզին կը պերի։ Խալիվոր կառնի Սանասարին, կէրթայ ծովու կղզին. էնտեղ խալիվոր շանց կտայ Բուռկու Չալալին, Թուր կեծակին, թամք սատաֆին, Գուրգն ի Գօրօզին։

30. Սանասար կասի.—Պա՛պի, էն կողմից որ էկայնք կղզին, զատ չըկար խբտ մէ, չը խթուայնք ճրի մէջ, ապա էս կողմից, էս ծանտը պանեբով ինչպէս պտի էրթայնք, որ չը խեխատուեյնք։ Խալիվոր ասաց.—Տիւ ձին խեծի, էտ կործիքներ առ, ծեռ տու ձի. աչքերըտ խփի, Աստուած կանչի, ես քեզ կը տանեմ տիւս։

31. Խալիվոր պերեց տիւս, ախպօր մօտ։ Բաղտասարն խասաւ իւր ախպօր կըլէօխը պաչեց, ասաց.—Ա՛խպէր, քեանի որ տիւ կերէվեր, ես կիրիշկէի քեզ, եի տիւ չէրէվացիր, ես նստայ լացի։

Խալիվոր էտ տեղ անյայտացաւ։

32. Սանասար ասաց.—Ի՞նչ անենք, ախպէր, պերենք էս ծովի պերան, աւազի մէջ փորենք, էս ծին, էս պաներ խորենք էս տեղ։

Բաղտասար ասաց.—Լաւ, էս պաներ խորենք, պայց ծինը խորենք, կը խատնի. էս պաներ խորենք, ծինը տանենք։

Էտա պէս էլ արին։

33. Էկան թակեաւորի թաւլախանճիւ[1] տիւռ կայնան, թաւլախանապետ ինոնց խարցրեց.—Ա՛յ տղայ, ինչ մարթ էք։

—Ինոնք ասին. «Խեղճ մարթ էնք»։

Թաւլախանապետ կասի.—Չէ՞ք ըլնի սէիս[2]։

Ասին.—կըլնենք, ա՛ղա։

Ասեց.—Կիտէ՞ք ծի թիմարէք։

Ասին.—խա՛։

34. Թաւլախանապետ տարաւ ինոնց թաւլէն, մինչև առաւօտ. առաւօտ էկաւ ասաց.—Վե՛ր կացէք, ծիներու տեղ չինէք։

Սանասար ցախաւել առեց, Բաղտասար թիակ. ծիանոց տեղ աւլեցին։ Աղէն ասաց.—Ծիաներն թիմարէք։

35. Սանասար ասաց.—Ցո՞ւր ա քերոց։

Ասաց.—Էտ յականատն ա։

---

1. Ախոռապետ։ 2. Չիապան։